Ափսո՜ւս, խազա՜ր հէֆ ափսուս գլխու գիւտին,
ա՜խ հալա գլխու գիւտին.
Ափսո՜ւս, խազա՜ր հէֆ ափսուս թուրնը կէծակին,
ա՜խ հալա թուրնը կէծակին.
Ափսո՜ւս, խազա՜ր հէֆ ափսուս քեամարն ի ոսկին,
ա՜խ հալա քեամարն ի ոսկին.
Ափսո՜ւս, խազա՜ր հէֆ ափսուս կապէն կաղըֆին,
ա՜խ հալա կապէն կաղըֆին.
Ափսո՜ւս, խազա՜ր հէֆ ափսուս ջզմէն իզան կաշին,
ա՜խ հալա ջզմէն իզան կաշին.
Ափսո՜ւս, խազա՜ր հէֆ ափսուս նալն ը պողվըտին,
զարկած ի ջզմի տըկին.
Ափսո՜ւս, խազա՜ր հէֆ ափսուս, զին էր սադաֆին,
կախուկ մօտէն ուրքերն էր ոսկին,
Ափսո՜ւս, խազա՜ր հէֆ ափսուս, գեամն էր պողվըտին,
ա՜խ հալա գեամն էր պողվըտին»։

Դաւիթ ըռըկաւ, ձեռ իտի վեար Թրին, տը քեաշէր, զարկէր խրօխպօր։

Ձէնով-Ցեովան կանչից.

«Ափսո՜ւս, խազա՜ր ափսուս,
Կինաց Սասնայ տնէն Քիւռիկ-Ջալալին.
Ափսո՜ւս, խազա՜ր ափսուս,
Կինաց Սասնայ տնէն գիւրզն ի փէրիզին.
Ափսո՜ւս, խազա՜ր ափսուս,
Կինաց Սասնայ տնէն գիւտին ի գլխին.
Ափսո՜ւս, խազա՜ր ափսուս,
Կինաց Սասնայ տնէն կապէն կաղըֆին.
Ափսո՜ւս, խազա՜ր ափսուս,
Կինաց Սասնայ տնէն գօտիկն ի մէջքին.
Ափսո՜ւս, խազա՜ր ափսուս,
Կինաց Սասնայ տնէն թուրն ի կէծակին.
Ափսո՜ւս, խազա՜ր ափսուս,
Կինաց Սասնայ տնէն Թուլան Դաւիթ»։